Այնպես՝ մեր պանը

ՄԻԱՑՈՒՄ... ՃԱԿԱՏԱԳՐՈՎ

(«ՏՈՆԱԿԱՆ» ՌԵՊՈՐՏԱԺ ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻՑ)

ԽԱՆՈՒԹՆԵՐԸ

Սխալվում են մեր շարժման երդվյալ թշնամիները՝ մենք վաղուց արդեն միացած ենք իրար: Մայր Հայաստանը և Արցախը միացած են... ճակատագրով և այդ ակամա «միացման» հեղինակները նույն այդ թշնամիներն են՝ հայատյաց և կույր «վերևները» և մեր ոխերիմ «բարեկամ-հարևանները»: Շրջափակում, ուրեմն երկուսի համար: Սննդամթերքների պակաս՝ հավասարապես երկու հատվածներում: «Տոնականորեն» զարդարված Ստեփանակերտի պարենային խանութներում նույն «մաքրությունն» է, ինչպիսին որ Երևանում է՝ մանկական սննդի («Մալիշ») մի քանի շարք հին տուփեր, հյութեր և... դատարկ շշեր: Նույն մաքրությունն է նաև պտուղբանջարեղենի և մյուս խանութներում, հասարակական սննդի օբյեկտներում: Իսկ հացի խանութներում երկար հերթեր են, թեև քաղաքում կան նաև հաց թխող տասնյակ կոոպերատիվներ: Տարբերությունը, թերևս մեկն է, այստեղ կան մի քանի տեսակի ատամի մածուկներ: Սոված մարդուն՝ հենց միայն ատամ մաքրելն է պակասում...

ՓՈՂՈՑՆԵՐԸ

«Միացումը» առկա է նաև փողոցների վերանվանման բնագավառում: Թեև դեռ վախվխեղով, կիսատ-պռատ է արվում այս գործը: Ուրախալի է, որ թե՛ ազգանունով և թե՛ էությամբ ոչ հայ Աթարբեկովի անվանը փոխարինել է «երդվյալ» հայ Գարեգին Նժդեհի անունը: Բայց որքա՜ն կուզեինք նույն ինքը՝ մեծ Նժդեհը, եթե իր կողքին տեսներ նաև Արցախում իր տեղակալ, «Արցախի Նժդեհ» Թևան Ստեփանյանի անունով կոչվող փողոց: Դեռ որքա՜ն պետք է արցախցու համար Թևան և «թևանիստ» անունները մնան մի տեսակ օտար-վանող: Դեռ որքա՜ն պետք է մի փոքրիկ քաղաքում տասնյակ փողոցներ կրեն այս տեղերին և այս ժողովրդին խորթ և օտար, անգամ թշնամի մարդկանց անունները:

Իսկ «հեղափոխության» երգիչ Հ. Հակոբյանի և «հեղափոխության նվաճումների» քաջարի պաշտպան Նելսոն Ստեփանյանի փողոցների հատույթում գտնվող «Հոկտեմբեր» կինոթատրոնը դեռ չի մաքրել «խորհրդային» զինվորների վանդալիզմի հետքերը: Դեռ ջարդված են ապակիները, կեղտոտ էն դահլիճի պատերը, շրջակայքը:

«ՏՈՆԱԿԱՆ» ՀԱՐԴԱՐԱՆՔ

«Մեծ» հոկտեմբերի «հաղթանակից» յոթանասուներեք տարի անց Ստեփանակերտում աչալրջորեն պահակում են հեղափոխության զինվորները: Գոնե «զատիշական հրաձիգներ» լինեին: Այստեղի զինվորների ազգությունը մի տեսակ անհասկանալի է: Համենայն դեպս՝ ռուսներ չեն, միջինասիացիներից, անդրուրալներից այստեղ բերված ոչ քրիստոնյա զինվորներ են՝ կոպիտ, լկտի, փնթի: Եվ հիմնականում պահակում են Բաքվից ուղարկված «սաՅիլը»՝ տխրահռչակ կազմկոմիտեն, որին այստեղ վաղուց արդեն «ղազկոմիտե» են ասում, եթե երբևէ խոսում են նրա մասին: Այդ նույն պահակակետի դեմ-դիմաց, նույն Գարեգին Նժդեհի անվան փողոցում փակցված է «Գանձասար—750» լուսանկարային ցուցահանդեսը՝ մաքուր-քրիստոնեական զուլալ-ազգային...

ՀՅՈՒՐԵՐ... ՊԱՐԵՏԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՄԲ

«Ղարաբաղ» հյուրանոց կարելի է մտնել միայն... անցաթղթերով: Եվ անպայման՝ հյուրանոցի պարետի թույլտվությամբ: Քաղաքի, շրջանի, մարզի, անգամ Կրեմլի պարետ լսել էինք, բայց... հյուրանոցի պարետ՝ առաջին անգամ էի լսում: Եվ հյուրերին նա է «ընտրում»: Ով իրեն դուր է գալիս՝ խնդրեմ, իսկ ով վստահություն չի ներշնչում՝ բարի ճանապարհ: Եվ այդ անցանկալիները հիմնականում Երևանից և ընդհանրապես Հայաստանից եկածներն են կամ թեկուզև Աֆրիկայից եկած, բայց երևանյան գրանցում ունեցողները: Հյուրանոցի տարեց պահակը չի կարողանում հիշել մի դեպք, երբ Բաքվից կամ Մոսկվայից եկած որևէ մեկը պարետի կողմից մերժում ստացած լինի: Մերժվում են միայն հայերը... հայկական հինավուրց հողում: Իսկ հյուրանոցի վարսավիրանոցից կարելի է օգտվել միայն դրսից հատուկ բացված դռնով. «ռազմական տեսակետից այդ վտանգավոր» օբյեկտը մեկուսացվել է հյուրերից: Սա ևս համարվում է «սաֆոնովշչինայի» հետաքրքիր (բայց՝ ոչ ծիծաղելի) դրսևորումներից մեկը...

ՄԻ ՔԱՆԻ ՏՀԱՃՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՆՈՒՅՆ ՕՐՎԱ ԵՐԵԿՈՅԱՆ

Նոյեմբերի 5-ի երեկոյան Ստեփանակերտի կուսքաղկոմի շենքի դիմաց հավաքված մարդկանց մոտ կտրուկ արգելակեց զինվորական մի ավտոմեքենա: Նրանից դուրս թափված վայրենի զինվորները սկսեցին... ծեծել անմեղ մարդկանց: Ծեծեցին կատաղի, ֆաշիստորեն, թուրքերեն: Ծեծեցին և հեռացան, ասես ոչինչ էլ չի եղել...

Երկու ժամ հետո քաղաքում հանգավ էլեկտրական լույսը: Առանց զարմանալու, առանց վրդովվելու, տներում սկսեցին վառել մոմ կամ նավթի լամպեր: Դե ինչ՝ միջնադար է, ուրեմն միջնադարյան կենցաղով են ապրում մարդիկ...

Իսկ ուշ երեկոյան, «Ժամանակ» ինֆորմացիոն ծրագրից անմիջապես հետո Ադրբեջանի հեռուստատեսությամբ Բաքվից հաղորդում տրվեց մոսկվացի մի քանի «լրագրողների» մասնակցությամբ: Եվ այդ կաշառված հյուրերը, մեկը մյուսից ստորաբար և լկտի, «ապացուցում» էին, որ Հայաստանից փախած ադրբեջանցիներ չկան Մոսկվայում, իսկ հայեր՝ կան: Ուրեմն՝ Հայաստանում լավ չեն ընդունել Բաքվից փախած իրենց հայրենակիցներին, իսկ Բաքվում Հայաստանից փախածներին լավ են ընդունել: Դե ինչ՝ երիցս ճիշտ էր Պարույր Սևակը. «Սուլթանն ու ցարը ձեռք-ձեռքի տվին միևնույն թվին»...

«ԱԿՆ ԸՆԴ ԱԿԱՆ»...

Ասկերանի կուսշրջկոմի առաջին քարտուղար Վիլսոն Քոչարյանը աշխատանքից հետո իր ծառայական մեքենայով տուն էր վերադառնում: Ճանապարհն անցնում է Խոջալու տխրահռչակ գյուղով, որը վարչականորեն նույն Ասկերանի շրջանի մեջ է մտնում: Մեքենան կանգնեցնում է զինվորական պարեկ սպան: Ավտոմատների փողի տակ ստիպում են «անօրինական» շրջկոմի քարտուղարին դուրս գալ մեքենայից: Մեքենան բռնագրավվում է, իսկ քարտուղարը մի կերպ հասնում է Ստեփանակերտ:

Դուրս է գալիս, որ իր շրջանի տարածքում շրջկոմի քարտուղարը ենթակա է... զինվորական պարեկին: Մի քանի օր անց պարեկող երկու զինվորների ծեծում են, ոնց որ պետք է, նրանցից խլում ավտոմատները, ապա բռնագրավում զինվորական դատախազի ավտոմեքենան: Անտրամաբանական արարքին հետևում է տրամաբանական պատասխանը: Այդպես եղել է, այդպես էլ կլինի: Արցախցու դեմ ուղղված ցանկացած զենք ի վերջո կուղղվի նույն թշնամու դեմ...

ԵՐԿՈՒ ՀԱՅԱՑՔ. ԵՐԿՈՒ ԽՈՀ

Իսկ առայժմ... Առայժմ մարզկենտրոնի կենտրոնում, իրարից մի քանի հարյուր մետր հեռավորության վրա, նույն ժողովրդի, բայց իրարից բոլորովին տարբեր երկու զավակների հուշարձաններն են: Նախկին մարզկոմի շենքի դեմ Լենինի արձանն է, իսկ Վահրամ Փափազյանի անվան հայկական դրամատիկական թատրոնի շենքի դեմ Գորկու արձանը: Տարբերությունը ոչ միայն մեր ժողովրդի ընկատմամբ հանրահայտ այս երկու մարդկանց վերաբերմունքի մեջ է, այլև նրանում, որ Լենինը թիկունքն է դարձրել արցախական կուսական լեռներին և «քայլում» է դեպի Աղդամի գորշ ու մշուշապատ հովիտը, իսկ Գորկու հայացքը Արցախի վեհ ու կուսական լեռներին է, դեպի հայկական ապականված Շուշին ու արցախյան մաքրամաքուր հեռաստանները: Եվ գուցե ճիշտ է արձանի «քայլերը», հայաբյաց ոչ մի մարդ տեղ չունի հայոց հողում և վաղ թե ուշ՝ պետք է հեռանա...

Մուշեղ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Ստեփանակերտ, նոյեմբեր